



30 Հունիսի 2021թ.

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և  
կից ծանոթագրություններ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական արդյունքների մասին  
«30» Հունիսի 2021 թ.

«Այրի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13  
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                    | Ծանոթագրություններ | 01/04/2021 - 30/06/2021 | 01/01/2021 - 30/06/2021 | 01/04/2020 - 30/06/2020 | 01/01/2020 - 30/06/2020 |
|------------------------------------------------------------------------------|--------------------|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                                              | 3                  | 3,940,549               | 7,594,033               | 3,420,192               | 6,722,112               |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                                                  | 3                  | (1,586,164)             | (3,050,042)             | (1,247,927)             | (2,476,582)             |
| <b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>                                     |                    | <b>2,354,385</b>        | <b>4,543,991</b>        | <b>2,172,265</b>        | <b>4,245,530</b>        |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ                            | 4                  | 732,550                 | 1,334,620               | 310,924                 | 579,456                 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր                                | 4                  | (286,751)               | (523,997)               | (90,828)                | (192,989)               |
| <b>Ստացված գուտ միջնորդավճարներ և այլ վճարներ</b>                            |                    | <b>445,799</b>          | <b>810,623</b>          | <b>220,096</b>          | <b>386,467</b>          |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից                                   | 5                  | 117,795                 | 355,864                 | 245,975                 | 22,799                  |
| Այլ գործառնական եկամուտներ                                                   | 6                  | 89,006                  | 215,941                 | 214,576                 | 654,500                 |
| <b>Գործառնական եկամուտներ</b>                                                |                    | <b>3,006,985</b>        | <b>5,926,419</b>        | <b>2,852,912</b>        | <b>5,309,296</b>        |
| Կորուստներ արժեզրկումից                                                      | 7                  | (114,330)               | (299,592)               | (793,672)               | (845,612)               |
| Ընդհանուր վարչական ծախսեր                                                    | 8                  | (1,753,970)             | (3,370,931)             | (1,389,986)             | (2,801,792)             |
| Այլ գործառնական ծախսեր                                                       | 9                  | (769,290)               | (1,348,169)             | (353,773)               | (626,995)               |
| <b>Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը</b>                                        |                    | <b>369,395</b>          | <b>907,727</b>          | <b>315,481</b>          | <b>1,034,897</b>        |
| Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում                                        | 10                 | (133,084)               | (203,606)               | (357,153)               | (392,044)               |
| <b>Ժամանակաշրջանի գուտ շահույթ</b>                                           |                    | <b>236,311</b>          | <b>704,121</b>          | <b>(41,672)</b>         | <b>642,853</b>          |
| <b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                    |                    | <b>(79,181)</b>         | <b>(76,755)</b>         | <b>313,092</b>          | <b>(385,615)</b>        |
| Ֆինանսական արդյունքներ փոխանցված գուտ օգուտ (վնաս)                           |                    | (11,628)                | (11,628)                | (43,838)                | (50,611)                |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած գուտ օգուտ (վնաս)                     |                    | (82,971)                | (80,013)                | 426,801                 | (443,318)               |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ |                    | 15,418                  | 14,886                  | (69,871)                | 108,314                 |
| <b>Համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                        |                    | <b>157,130</b>          | <b>627,366</b>          | <b>271,420</b>          | <b>257,238</b>          |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ                                 | 11                 | 0.3                     | 1.0                     | (0.1)                   | 0.9                     |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ                               | 11                 | 0.3                     | 1.0                     | (0.1)                   | 0.9                     |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

14/07/21

Վարչության նախագահ՝

Մհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝

Անուշիկ Խաչատրյան

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական վիճակի մասին

«30» Հունիսի 2021 թ.

«Այդի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13  
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                                 | Ծանոթագրություններ | 30/06/21           | 31/12/2020թ.<br>(Ստուգված) |
|-------------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------|----------------------------|
| <b>Ակտիվներ</b>                                                                           |                    |                    |                            |
| Կանխիկ դրամական միջոցներ                                                                  |                    | 4,550,201          | 6,812,304                  |
| ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ                                               | 12                 | 10,025,311         | 13,352,934                 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ                                                                | 13                 | 5,281,670          | 10,192,585                 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ                                                              | 14                 | 38,915             | -                          |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ                                   | 15                 | 6,923,689          | 6,039,207                  |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ                                              | 16                 | 110,897,783        | 98,116,950                 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 17                 | 9,113,048          | 8,484,090                  |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ                                    | 18                 | 18,799,425         | 20,665,861                 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                                                 | 19                 | 8,338,403          | 8,216,495                  |
| Բռնագանձված ակտիվներ                                                                      | 20                 | 2,529,584          | 2,484,925                  |
| Այլ ակտիվներ                                                                              | 21                 | 3,142,624          | 2,565,168                  |
| <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                                                 |                    | <b>179,640,653</b> | <b>176,930,519</b>         |
| <b>Պարտավորություններ</b>                                                                 |                    |                    |                            |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ                                                       | 22                 | 23,767,595         | 31,101,249                 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ                                                  | 23                 | 91,900,332         | 81,994,955                 |
| Այլ փոխառություններ                                                                       | 24                 | 2,564,644          | 1,868,271                  |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ                                                    | 14                 | -                  | 19,040                     |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթեր                                                          | 25                 | 12,741,928         | 13,416,535                 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ                                                     | 26                 | 1,169,004          | 1,011,620                  |
| Այլ պարտավորություններ                                                                    | 27                 | 2,600,573          | 3,249,638                  |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>                                                       |                    | <b>134,744,076</b> | <b>132,661,308</b>         |
| <b>Կապիտալ</b>                                                                            |                    |                    |                            |
| Կանոնադրական կապիտալ                                                                      | 28                 | 33,971,850         | 33,971,850                 |
| Էմիսիոն եկամուտ                                                                           |                    | 5,014,099          | 5,014,099                  |
| Պահուստներ՝                                                                               |                    | 582,357            | 598,457                    |
| Գլխավոր պահուստ                                                                           |                    | 107,760            | 107,760                    |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ                                                  |                    | 105,601            | 105,601                    |
| Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատ. պահուստ                                  |                    | 368,996            | 385,096                    |
| Զբաղիված շահույթ (վնաս)                                                                   |                    | 5,328,271          | 4,684,805                  |
| <b>Ընդամենը՝ կապիտալ</b>                                                                  |                    | <b>44,896,577</b>  | <b>44,269,211</b>          |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ</b>                                             |                    | <b>179,640,653</b> | <b>176,930,519</b>         |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

14/07/21

Վարչության նախագահ՝

Մհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝

Անուշիկ Խաչատրյան

**ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 30» Հունիսի 2021 թ

«Այդի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                                | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եամուտ   | Գլխավոր պահուստ | Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | Իրական արժեքով՝ այլ համ ֆին արդ միջ չափվող ֆին ակտիվների վերագ պահուստ | Զբաղիված շահույթ (վնաս) | Ընդամենը կապիտալ  |
|------------------------------------------------------------------------------------------|----------------------|------------------|-----------------|------------------------------------------|------------------------------------------------------------------------|-------------------------|-------------------|
| <i>Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)</i> |                      |                  |                 |                                          |                                                                        |                         |                   |
| <b>Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)</b>                                 | 33,971,850           | 5,014,099        | 107,760         | 110,808                                  | 842,981                                                                | 3,508,136               | <b>43,555,634</b> |
| Տարվա շահույթ (վնաս)                                                                     | -                    | -                | -               | -                                        | -                                                                      | 642,853                 | <b>642,853</b>    |
| <b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                                | -                    | -                | -               | <b>(5,207)</b>                           | <b>(380,408)</b>                                                       | -                       | <b>(385,615)</b>  |
| Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուր օգուտ (վնաս)                                       | -                    | -                | -               | (5,207)                                  | (45,404)                                                               | -                       | <b>(50,611)</b>   |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուր օգուտ (վնաս)                                 | -                    | -                | -               | -                                        | (443,318)                                                              | -                       | <b>(443,318)</b>  |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահույթահարկ            | -                    | -                | -               | -                                        | 108,314                                                                | -                       | <b>108,314</b>    |
| <b>Մնացորդը 2020թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)</b>                                | <b>33,971,850</b>    | <b>5,014,099</b> | <b>107,760</b>  | <b>105,601</b>                           | <b>462,573</b>                                                         | <b>4,150,989</b>        | <b>43,812,872</b> |

## Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ածողական)

|                                                                              |                   |                  |                |                |                 |                  |                   |
|------------------------------------------------------------------------------|-------------------|------------------|----------------|----------------|-----------------|------------------|-------------------|
| <b>Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)</b>                     | 33,971,850        | 5,014,099        | 107,760        | 105,601        | 385,096         | 4,684,805        | <b>44,269,211</b> |
| Նախորդ տարիներին վերաբերվող կարգավորումներ                                   | -                 | -                | -              | -              | 60,655          | (60,655)         | -                 |
| <b>Վերահաշվարկված մնացորդ</b>                                                | <b>33,971,850</b> | <b>5,014,099</b> | <b>107,760</b> | <b>105,601</b> | <b>445,751</b>  | <b>4,624,150</b> | <b>44,269,211</b> |
| Տարվա շահույթ (վնաս)                                                         | -                 | -                | -              | -              | -               | <b>704,121</b>   | <b>704,121</b>    |
| <b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>                                    | -                 | -                | -              | -              | <b>(76,755)</b> | -                | <b>(76,755)</b>   |
| Ֆինանսական արդյունքներ փոխանցված զույր օգույր (վնաս)                         | -                 | -                | -              | -              | (11,628)        | -                | <b>(11,628)</b>   |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զույր օգույր (վնաս)                   | -                 | -                | -              | -              | (80,013)        | -                | <b>(80,013)</b>   |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ | -                 | -                | -              | -              | 14,886          | -                | <b>14,886</b>     |
| <b>Մնացորդը 2021թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)</b>                    | <b>33,971,850</b> | <b>5,014,099</b> | <b>107,760</b> | <b>105,601</b> | <b>368,996</b>  | <b>5,328,271</b> | <b>44,896,577</b> |

Վարչության նախագահ՝

Մհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝

Անուշիկ Խաչատրյան

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
 Դրամական միջոցների հոսքերի մասին  
 «30» Հունիսի 2021 թ  
 «Այդի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. 13  
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                                              | Նախորդ ժամանակաշրջան      | Հաշվետու ժամանակաշրջան    |
|--------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------|---------------------------|
|                                                                                                        | 01/01/20-ից<br>30/06/20թ. | 01/01/21-ից<br>30/06/21թ. |
| <b>1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>                                                |                           |                           |
| <i>Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i> | <b>3,052,933</b>          | <b>3,910,418</b>          |
| Ստացված տոկոսներ                                                                                       | 6,324,996                 | 7,827,608                 |
| Վճարված տոկոսներ                                                                                       | (2,086,857)               | (2,255,804)               |
| Ստացված կոմիսիոն գումարներ                                                                             | 579,456                   | 1,334,620                 |
| Վճարված կոմիսիոն գումարներ                                                                             | (192,989)                 | (523,997)                 |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)                                            | 207,088                   | 203,480                   |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ                                                               | 788,260                   | 888,414                   |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ                                                  | (1,883,822)               | (2,007,571)               |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր                              | (683,199)                 | (1,556,332)               |
| <b>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</b>                   | <b>(4,245,618)</b>        | <b>(3,513,396)</b>        |
| <i>Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)</i>                                                    | (11,190,478)              | (11,805,877)              |
| այդ թվում՝ վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)                                             | (10,988,317)              | (11,555,644)              |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)                                                          | (202,161)                 | (250,233)                 |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)                                                    | 6,944,860                 | 8,292,481                 |
| այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)                               | 6,239,750                 | 12,071,892                |
| այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)                                                | 705,110                   | (3,779,411)               |
| <b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը</b>                  | <b>(1,192,685)</b>        | <b>397,022</b>            |
| Վճարված շահութահարկ                                                                                    | (5,000)                   | (975,000)                 |
| <b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>                                              | <b>(1,197,685)</b>        | <b>(577,978)</b>          |
| <b>2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>                                               | <b>x</b>                  | <b>x</b>                  |
| Այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)                                            | (256,042)                 | 2,195,201                 |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)                                    | (671,648)                 | (1,562,463)               |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)               | (286,237)                 | (4,465)                   |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում) օտարում                                       | (525,675)                 | (667,599)                 |
| <b>Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>                                             | <b>(1,739,602)</b>        | <b>(39,326)</b>           |
| <b>3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>                                                 | <b>x</b>                  | <b>x</b>                  |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)                                                  | (753,980)                 | (3,551,963)               |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)                                                  | 846,011                   | -                         |
| <b>Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>                                               | <b>92,031</b>             | <b>(3,551,963)</b>        |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա            | (111,987)                 | (471,243)                 |
| <b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</b>                                       | <b>(2,957,243)</b>        | <b>(4,640,510)</b>        |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում                                           | 17,144,330                | 20,123,865                |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում                                           | 14,187,087                | 15,483,355                |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

14/07/21

Վարչության նախագահ՝

Մհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝

Անուշիկ Խաչատրյան

**ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
 Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ  
 «Այրի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13  
 (Բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Ամսաթիվը

01/04/21

թ.-ից 30/06/21 թ.

(Հազար դրամ)

| Նորմատիվներ                                                                                                                                                                             | Նորմատիվի փաստացի մեծությունը հաշվարկված բանկի համար | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|---------------------------------------|
| 1                                                                                                                                                                                       | 2                                                    | 3                                                               | 4                                     |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը                                                                                                                                           | 33,971,850                                           | 50,000                                                          | Խախտում առկա չէ                       |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը                                                                                                                                            | 35,101,845                                           | 30,000,000                                                      | Խախտում առկա չէ                       |
| Ն11 Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                                           | 22.37%                                               | 9.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Ն12 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                                          | 22.70%                                               | 12.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                    | 21.35%                                               | 15.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը                       | 83.78%                                               | 60.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն23 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և գուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)                                                                    | 129.35%                                              | 100.0%                                                          | Խախտում առկա չէ                       |
| Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և գուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)                           | 129.33%                                              | 60.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն24 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)                                                        | 114.57%                                              | 100.0%                                                          | Խախտում առկա չէ                       |
| Ն24 (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)               | 143.45%                                              | 60.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը | 21.73%                                               | 4.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը    | 101.93%                                              | 10.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                                           | 13.60%                                               | 20.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                                      | 80.47%                                               | 500.0%                                                          | Խախտում առկա չէ                       |
| Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                              | 0.34%                                                | 5.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                          | 4.91%                                                | 20.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով                                                                                | X                                                    | 4.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| արտարժույթով                                                                                                                                                                            | X                                                    | 18%,<br>որից 8% արտարժույթով,<br>10% դրամով                     | Խախտում առկա չէ                       |
| Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը                                                                                                    | 5.78%                                                | 10.0%                                                           | Խախտում առկա չէ                       |
| Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝                                                             |                                                      |                                                                 |                                       |
| ԱՄՆ դոլարով                                                                                                                                                                             | 5.4%                                                 | 7.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Եվրոյով                                                                                                                                                                                 | 0.0%                                                 | 7.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Ռուսական ռուբլիով                                                                                                                                                                       | 0.1%                                                 | 7.0%                                                            | Խախտում առկա չէ                       |
| Այլ                                                                                                                                                                                     | X                                                    | 7.0%                                                            | Խախտում առկա չէ                       |

## Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

Բանկը հիմնադրվել է 1990թ.-ին Հայաստանի Հանրապետությունում: Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ. ապրիլին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ: 2018թ. հունիսի 4-ից վերանվանվել է «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ):

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 13 մասնաճյուղերը գտնվում են Երևանում և տարբեր շրջաններում: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վարդանանց փ. 13:

### Բանկի մասնաճյուղերը՝

«Վարդանանց» մասնաճյուղ, ք. Երևան, Վարդանանց փ. 13/3, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 Գյումրիի մասնաճյուղ, ք. Գյումրի, Անկախության հր-կ 6, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,  
 Աբովյանի մասնաճյուղ, ք. Աբովյան, Տարտուի փ 1/1, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Արաբկիր» մասնաճյուղ, ք. Երևան, Կոմիտաս 56/162, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Նոր Նորք» մասնաճյուղ, ք. Երևան, Գայի պողոտա 17/1 շենք, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,  
 Էջմիածնի մասնաճյուղ, ք. Էջմիածին, Խորենացի 16, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 Վանաձորի մասնաճյուղ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 73, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 Դավթաշենի մասնաճյուղ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 11/91, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Բաղրամյան» մասնաճյուղ, ք. Երևան, Բաղրամյան 75, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Մալաթիա» մասնաճյուղ, ք. Երևան, Բաժ. ֆու 39/61, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,  
 «Կենտրոն» մասնաճյուղ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա շենք 6, տարածք 10, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Էրեբունի» մասնաճյուղ, ք. Երևան, Էրեբունի 7/60, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33  
 «Շենգավիթ» մասնաճյուղ, ք. Երևան, Բազրատունյաց 13, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33

Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2021 թ-ի երկրորդ եռամսյակում կամել է 614 մարդ:



## Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման սկզբունքներից ելնելով և ղեկավարվելով «Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Բանկի արդյունավետ ղեկավարման համար գործում է Բանկի Վարչությունը: Բանկի Վարչությունն իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, կազմակերպում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Բանկի Խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը, ապահովում է բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին ակտերի կատարումը:

Բանկի Խորհուրդը, Վարչության աշխատանքների գնահատման համար, հիմք է ընդունում Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի, Ներքին վերահսկողության վարչության կողմից Խորհրդին ներկայացվող պարբերական հաշվետվությունները և տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացությունը: Վարչության աշխատանքները գնահատվում են ելնելով Վարչության կողմից իրականացվող՝

- ✓ Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- ✓ Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- ✓ Ռիսկերի զապմանն ուղղված գործառնություններից,
- ✓ Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- ✓ Տոկոսադրույթների քաղաքականությունից,
- ✓ Եկամուտների և ծախսերի արդյունավետ քաղաքականությունից,
- ✓ Կադրային քաղաքականությունից

### Բանկի խորհրդի կազմը

|                      |                 |
|----------------------|-----------------|
| Վարտան Դիլանյան՝     | Խորհրդի նախագահ |
| Կարեն Մարգարյան՝     | Խորհրդի անդամ   |
| Ելենա Խաչվանքյան՝    | Խորհրդի անդամ   |
| Ալեքսեյ Կոմար՝       | Խորհրդի անդամ   |
| Ալեքսանդր Խաչատրյան՝ | Խորհրդի անդամ   |

### Բանկի վարչության կազմը

|                    |                                                                                               |
|--------------------|-----------------------------------------------------------------------------------------------|
| Մհեր Աբրահամյան՝   | Վարչության նախագահ                                                                            |
| Կարեն Նալբանդյան՝  | Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Վարչության անդամ                                               |
| Արման Ասատրյան՝    | Ֆինանսական տնօրեն՝ Վարչության անդամ                                                           |
| Ռաֆիկ Սուվարյան՝   | Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ                                              |
| Անուշիկ Խաչատրյան՝ | Գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության պետ, Վարչության անդամ |
| Սերգեյ Առաքելյան՝  | Թվային Բանկինգի տնօրեն, Վարչության անդամ                                                      |
| Տիգրան Մխիթարյան՝  | Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ                                                   |

### Բանկի բաժնետերեր

| Բաժնետեր          | Մասնակության<br>չափը<br>( հազար դրամ) | %           |
|-------------------|---------------------------------------|-------------|
| ՖԻՍԹՈՔՈ Էլ Թի Դի  | 20,275,550                            | 59.68%      |
| CreditBank S.A.L. | 13,696,300                            | 40.32%      |
| <b>Ընդամենը</b>   | <b>33,971,850</b>                     | <b>100%</b> |

### Գործարար միջավայր

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Բացի այդ, 2020թ.-ին համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկումով: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների կտրուկ անկման: Այս զարգացումներն էլ ավելի են մեծացնում գործունեության իրականացման հետ կապված անորոշության մակարդակը Հայաստանի գործարար միջավայրում:

## 1. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### Համապատասխանությունը

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

### Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

### Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

## Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

## Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Գործարքների ծավալները, մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

2021 թ. Հունիսի 30-ի դրությամբ

2020 թ. Հունիսի 30-ի դրությամբ

 Բաժնետերեր և  
կապակցված  
կողմեր

 Ղեկավար  
անձնակազմ և  
կապակցված  
կողմեր

 Բաժնետերեր և  
կապակցված  
կողմեր

 Ղեկավար  
անձնակազմ և  
կապակցված  
կողմեր

**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ  
հաշվետվությունում**
**Ավտիվներ**
**Հաճախորդներին տրված վարկեր**

|                                                |          |                |          |                |
|------------------------------------------------|----------|----------------|----------|----------------|
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ                | -        | 395,438        | -        | 295,603        |
| Ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված            | -        | 406,334        | -        | 277,287        |
| Ժամանակաշրջանի ընթացքում մարված                |          | (259,023)      |          | (174,825)      |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ        | -        | 542,749        | -        | 398,065        |
| Արժեզրկման պահուստ                             | -        | (1,625)        | -        | (3,691)        |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b> | <b>-</b> | <b>541,124</b> | <b>-</b> | <b>394,374</b> |

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

|                                                |           |          |           |          |
|------------------------------------------------|-----------|----------|-----------|----------|
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ                | 44        | -        | 1,092     | -        |
| Մուտքեր                                        | 6         | -        | 58,567    | -        |
| Ելքեր                                          | (9)       | -        | (59,620)  | -        |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b> | <b>41</b> | <b>-</b> | <b>39</b> | <b>-</b> |

**Պարտավորություններ**
**Պարտավորություններ ֆինանսական  
կազմակերպությունների նկատմամբ**

|                                                |               |          |               |          |
|------------------------------------------------|---------------|----------|---------------|----------|
| Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ                | 65,462        | -        | 103,377       | -        |
| Ժամանակաշրջանի ընթացքում ստացված<br>ավանդներ   | 16            | -        | 3,473         | -        |
| Ժամանակաշրջանի ընթացքում մարված<br>ավանդներ    | (25)          | -        | (41,404)      | -        |
| <b>Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b> | <b>65,453</b> | <b>-</b> | <b>65,446</b> | <b>-</b> |

**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**

|                                              |             |             |          |           |
|----------------------------------------------|-------------|-------------|----------|-----------|
| Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ              | 5,013       | 235,293     | 35,704   | 206,315   |
| Ժամանակաշրջանի ընթացքում ստացված<br>ավանդներ | 1,054,012   | 1,356,619   | 45,098   | 704,573   |
| Ժամանակաշրջանի ընթացքում մարված<br>ավանդներ  | (1,057,155) | (1,308,598) | (75,512) | (695,984) |

|                                                    |              |                |          |                |
|----------------------------------------------------|--------------|----------------|----------|----------------|
| Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ            | <b>1,870</b> | <b>283,314</b> | 5,290    | 214,904        |
| <b>Թողարկված պարտքային արժեթղթեր</b>               |              |                |          |                |
| Արժեթղթեր հունվարի 1-ի դրությամբ                   | -            | <b>139,028</b> | -        | 174,844        |
| Ժամանակաշրջանի ընթացքում իրացված(մարված) արժեթղթեր | -            | <b>15,158</b>  | -        | (70,749)       |
| <b>Արժեթղթեր ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>    | <b>-</b>     | <b>154,186</b> | <b>-</b> | <b>104,095</b> |

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

|                                                                  | 01/01/2021թ. –<br>30/06/2021թ. | <i>Հազար ՀՀ դրամ</i><br>01/01/2020թ. –<br>30/06/2020թ. |
|------------------------------------------------------------------|--------------------------------|--------------------------------------------------------|
| Աշխատավարձ և պարգևատրումներ                                      | 223,080                        | 246,849                                                |
| <b>Ընդամենը Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ</b> | <b>223,080</b>                 | <b>246,849</b>                                         |

## 32. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

30/06/21

|                                                                                                                                  | Մինչև 1<br>ամիս   | 1-ից<br>3 ամիս   | 3 ամսից<br>1 տարի | 1-ից<br>5-տարի    | Ավելի քան<br>5 տարի | Անժամկետ          | Ժամկետանց      | Ընդամենը           |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|------------------|-------------------|-------------------|---------------------|-------------------|----------------|--------------------|
|                                                                                                                                  | հազ. դրամ         | հազ. դրամ        | հազ. դրամ         | հազ. դրամ         | հազ. դրամ           | հազ. դրամ         | հազ. դրամ      | հազ. դրամ          |
| <b>Ակտիվներ</b>                                                                                                                  |                   |                  |                   |                   |                     |                   |                |                    |
| Կանխիկ դրամական միջոցներ                                                                                                         | 4,550,201         | -                | -                 | -                 | -                   | -                 | -              | 4,550,201          |
| ՀՀ կենտրոնական բանկում<br>տեղաբաշխված միջոցներ                                                                                   | 9,638,811         | -                | -                 | -                 | -                   | 386,500           | -              | 10,025,311         |
| Պահանջներ բանկերի նկատմամբ                                                                                                       | 4,489,976         | 590,155          | 3,195             | 198,344           | -                   | -                 | -              | 5,281,670          |
| Ածանցյալ ֆինանսական<br>ակտիվներ                                                                                                  | 38,915            | -                | -                 | -                 | -                   | -                 | -              | 38,915             |
| Հակադարձ հետգնման<br>պայմանագրերի գծով ստացվելիք<br>գումարներ                                                                    | 6,923,689         | -                | -                 | -                 | -                   | -                 | -              | 6,923,689          |
| Հաճախորդներին տրված վարկեր<br>Իրական արժեքով՝ այլ<br>համապարփակ ֆինանսական<br>արդյունքների միջոցով չափվող<br>ֆինանսական ակտիվներ | 8,192,284         | 8,117,609        | 18,994,539        | 54,910,143        | 20,439,152          | -                 | 244,056        | 110,897,783        |
| Ամորտիզացված արժեքով<br>հաշվառվող այլ ֆինանսական<br>ակտիվներ                                                                     | -                 | -                | 694,012           | 4,268,058         | 2,403,800           | 1,747,178         | -              | 9,113,048          |
| Հիմնական միջոցներ և ոչ<br>նյութական ակտիվներ                                                                                     | -                 | -                | -                 | 6,049,034         | 12,750,391          | -                 | -              | 18,799,425         |
| Բռնագանձված ակտիվներ                                                                                                             | -                 | -                | -                 | -                 | -                   | 2,529,584         | -              | 2,529,584          |
| Այլ ակտիվներ                                                                                                                     | 3,141,540         | -                | -                 | -                 | -                   | -                 | 1,084          | 3,142,624          |
| <b>Ընդամենը ակտիվներ</b>                                                                                                         | <b>36,975,416</b> | <b>8,707,764</b> | <b>19,691,746</b> | <b>65,425,579</b> | <b>35,593,343</b>   | <b>13,001,665</b> | <b>245,140</b> | <b>179,640,653</b> |

|                                          | <b>Մինչև 1<br/>ամիս</b> | <b>1-ից<br/>3 ամիս</b> | <b>3 ամսից<br/>1 տարի</b> | <b>1-ից<br/>5-տարի</b> | <b>Ավելի քան<br/>5 տարի</b> | <b>Անժամկետ</b>   | <b>Ժամկետանց</b> | <b>Ընդամենը</b>    |
|------------------------------------------|-------------------------|------------------------|---------------------------|------------------------|-----------------------------|-------------------|------------------|--------------------|
|                                          | <i>հազ. դրամ</i>        | <i>հազ. դրամ</i>       | <i>հազ. դրամ</i>          | <i>հազ. դրամ</i>       | <i>հազ. դրամ</i>            | <i>հազ. դրամ</i>  | <i>հազ. դրամ</i> | <i>հազ. դրամ</i>   |
| <b>Պարտավորություններ</b>                |                         |                        |                           |                        |                             |                   |                  |                    |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ      | 17,766,391              | -                      | 4,074,804                 | 1,926,400              | -                           | -                 | -                | <b>23,767,595</b>  |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 44,268,243              | 7,923,657              | 32,824,473                | 6,425,703              | 458,256                     | -                 | -                | <b>91,900,332</b>  |
| Այլ փոխառություններ                      | 28,048                  | 48,987                 | 218,950                   | 1,202,174              | 1,066,485                   | -                 | -                | <b>2,564,644</b>   |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթեր         | 46,487                  | 2,527,433              | 2,730,108                 | 7,437,900              | -                           | -                 | -                | <b>12,741,928</b>  |
| Հետաձգված հարկային պարտավորություններ    | -                       | -                      | 1,169,004                 | -                      | -                           | -                 | -                | <b>1,169,004</b>   |
| Այլ պարտավորություններ                   | 1,755,032               | 13,117                 | 40,104                    | 98,125                 | 694,195                     | -                 | -                | <b>2,600,573</b>   |
| Ընդամենը Պարտավորություններ              | <b>63,864,201</b>       | <b>10,513,194</b>      | <b>41,057,443</b>         | <b>17,090,302</b>      | <b>2,218,936</b>            | -                 | -                | <b>134,744,076</b> |
| <b>Զուտ դիրք</b>                         | <b>(26,888,785)</b>     | <b>(1,805,430)</b>     | <b>(21,365,697)</b>       | <b>48,335,277</b>      | <b>33,374,407</b>           | <b>13,001,665</b> | <b>245,140</b>   | <b>44,896,577</b>  |

## Ռիսկի կառավարում

### Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և կազմում է Բանկի գործառնությունների կենսական տարրը: Ֆինանսական ռիսկը, շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացմանն ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկի ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի ծառայությունը հաճախ պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

## Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկերի բաժնի և Ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատական վարկավորման ծառայությունների բաժնի կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման բաժնի հետ համատեղ մշակված գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին վարկերի վերլուծությունից, Ռիսկերի կառավարման բաժինը վարկային պորտֆելը գնահատում է պարտքային ռիսկի կենտրոնացվածության և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

## Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, սոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային

Ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

### Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

### Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2021թ. Հունիսի 30-ի դրությամբ:

|                                                         | ՀՀ դրամ   | ԱՄՆ դոլար | Եվրո      | Ռուսական ռուբլի | Այլ արտարժույթ | Ընդամենը          |
|---------------------------------------------------------|-----------|-----------|-----------|-----------------|----------------|-------------------|
|                                                         | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ       | հազ. դրամ      | հազ. դրամ         |
| <b>Ակտիվներ</b>                                         |           |           |           |                 |                |                   |
| Կանխիկ դրամական միջոցներ                                | 2,699,831 | 1,154,917 | 368,720   | 220,373         | 106,360        | <b>4,550,201</b>  |
| ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ             | 5,297,370 | 4,253,866 | 474,075   | -               | -              | <b>10,025,311</b> |
| Պահանջներ բանկերի նկատմամբ                              | 34,887    | 3,046,594 | 1,130,997 | 947,675         | 121,517        | <b>5,281,670</b>  |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ                            | 38,915    | -         | -         | -               | -              | <b>38,915</b>     |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,883,232 | -         | 40,457    | -               | -              | <b>6,923,689</b>  |



|                                                                             |                    |                   |                   |                  |                |                    |
|-----------------------------------------------------------------------------|--------------------|-------------------|-------------------|------------------|----------------|--------------------|
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 68,314,479         | 28,006,625        | 12,582,079        | 1,994,600        | -              | <b>110,897,783</b> |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին արդ չափ ակտիվներ                         | 4,074,646          | 3,604,731         | -                 | 1,433,671        | -              | <b>9,113,048</b>   |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆին ակտիվներ                             | 15,483,729         | 2,729,331         | 586,365           | -                | -              | <b>18,799,425</b>  |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                                   | 8,338,403          | -                 | -                 | -                | -              | <b>8,338,403</b>   |
| Բռնագանձված ակտիվներ                                                        | 2,529,584          | -                 | -                 | -                | -              | <b>2,529,584</b>   |
| Այլ ակտիվներ                                                                | 2,827,267          | 256,280           | 24,878            | 34,199           | -              | <b>3,142,624</b>   |
| <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                                   | <b>116,522,343</b> | <b>43,052,344</b> | <b>15,207,571</b> | <b>4,630,518</b> | <b>227,877</b> | <b>179,640,653</b> |

**Պարտավորություններ**

|                                             |                   |                    |                  |                  |                  |                    |
|---------------------------------------------|-------------------|--------------------|------------------|------------------|------------------|--------------------|
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ         | 18,709,323        | 1,034,698          | 3,865,548        | 158,026          | -                | <b>23,767,595</b>  |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ    | 51,564,023        | 34,175,968         | 3,475,774        | 1,661,138        | 1,023,429        | <b>91,900,332</b>  |
| Այլ փոխառություններ                         | 2,559,650         | 4,994              | -                | -                | -                | <b>2,564,644</b>   |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթեր            | 253,562           | 12,488,366         | -                | -                | -                | <b>12,741,928</b>  |
| Հետաձգված հարկային պարտավորություններ       | 1,169,004         | -                  | -                | -                | -                | <b>1,169,004</b>   |
| Այլ պարտավորություններ                      | 2,135,721         | 462,344            | 2,496            | 12               | -                | <b>2,600,573</b>   |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>         | <b>76,391,283</b> | <b>48,166,370</b>  | <b>7,343,818</b> | <b>1,819,176</b> | <b>1,023,429</b> | <b>134,744,076</b> |
| Ջուտ հաշվեկշռային դիրք առ 30 Հունիսի 2021թ. | <b>40,131,060</b> | <b>(5,114,026)</b> | <b>7,863,753</b> | <b>2,811,342</b> | <b>(795,552)</b> | <b>44,896,577</b>  |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

|                                                                             | <b>ՀՀ դրամ</b>     | <b>ԱՄՆ դոլար</b>  | <b>Եվրո</b>       | <b>Ռուս<br/>ռուբլի</b> | <b>Այլ արժ</b>       | <b>Ընդամենը</b>    |
|-----------------------------------------------------------------------------|--------------------|-------------------|-------------------|------------------------|----------------------|--------------------|
|                                                                             | <b>հազ. դրամ</b>   | <b>հազ. դրամ</b>  | <b>հազ. դրամ</b>  | <b>հազ.<br/>դրամ</b>   | <b>հազ.<br/>դրամ</b> | <b>հազ. դրամ</b>   |
| <b>Ակտիվներ</b>                                                             |                    |                   |                   |                        |                      |                    |
| Կանխիկ դրամական միջոցներ                                                    | 3,629,452          | 767,213           | 559,737           | 1,822,956              | 32,946               | <b>6,812,304</b>   |
| ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ                                 | 7,354,424          | 5,466,852         | 531,658           | -                      | -                    | <b>13,352,934</b>  |
| Պահանջներ բանկերի նկատմամբ                                                  | 12,760             | 3,658,203         | 6,243,930         | 256,778                | 20,914               | <b>10,192,585</b>  |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ                     | 5,974,316          | 23,652            | 41,239            | -                      | -                    | <b>6,039,207</b>   |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 58,753,352         | 26,361,882        | 11,327,176        | 1,674,540              | -                    | <b>98,116,950</b>  |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին արդ չափ ակտիվներ                         | 4,361,778          | 4,122,312         | -                 | -                      | -                    | <b>8,484,090</b>   |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆին ակտիվներ                             | 16,182,835         | 2,759,674         | 1,723,352         | -                      | -                    | <b>20,665,861</b>  |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                                   | 8,216,495          | -                 | -                 | -                      | -                    | <b>8,216,495</b>   |
| Բռնագանձված ակտիվներ                                                        | 2,484,925          | -                 | -                 | -                      | -                    | <b>2,484,925</b>   |
| Այլ ակտիվներ                                                                | 2,059,468          | 455,975           | 8,317             | 41,408                 | -                    | <b>2,565,168</b>   |
| <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                                   | <b>109,029,805</b> | <b>43,615,763</b> | <b>20,435,409</b> | <b>3,795,682</b>       | <b>53,860</b>        | <b>176,930,519</b> |
| <b>Պարտավորություններ</b>                                                   |                    |                   |                   |                        |                      |                    |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ                                         | 17,465,586         | 9,014,024         | 4,349,091         | 272,548                | -                    | <b>31,101,249</b>  |
| Պարտավորություններ հաճախորդներին նկատմամբ                                   | 46,311,427         | 31,164,207        | 3,194,622         | 1,311,668              | 13,031               | <b>81,994,955</b>  |
| Այլ փոխառություններ                                                         | 1,861,878          | 6,393             | -                 | -                      | -                    | <b>1,868,271</b>   |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ                                      | 19,040             | -                 | -                 | -                      | -                    | <b>19,040</b>      |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթեր                                            | 253,573            | 13,162,962        | -                 | -                      | -                    | <b>13,416,535</b>  |

|                                                |                   |                     |                   |                  |               |                    |
|------------------------------------------------|-------------------|---------------------|-------------------|------------------|---------------|--------------------|
| Հետաձգված հարկային պարտավորություններ          | 1,011,620         | -                   | -                 | -                | -             | <b>1,011,620</b>   |
| Այլ պարտավորություններ                         | 2,758,143         | 489,135             | 1,264             | 1,096            | -             | <b>3,249,638</b>   |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>            | <b>69,681,267</b> | <b>53,836,721</b>   | <b>7,544,977</b>  | <b>1,585,312</b> | <b>13,031</b> | <b>132,661,308</b> |
| Զուտ հաշվեկշռային դիրք առ 31 Դեկտեմբերի 2020թ. | <b>39,348,538</b> | <b>(10,220,958)</b> | <b>12,890,432</b> | <b>2,210,370</b> | <b>40,829</b> | <b>44,269,211</b>  |

## Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը

հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես թեստերը» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս դեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

## Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2021թ. Հունիսի 30-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2020թ-ին՝ 12%): 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. Հունիսի 30-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը:

|                                                                                                                      | Հունիս 2021թ. | Դեկտեմբեր 2020թ. |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|------------------|
| <b>Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)</b> | <b>22.70%</b> | <b>25.02%</b>    |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

## Պայմանական դեպքեր

### Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված և Բանկն ունի Բանկերս Բլանկետ Բոնդ (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր:

### Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են

ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: